ՏԵՂԵԿԱՆՔ

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ՝ 2025Թ. ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

2025 թ. ընթացքում ՀՀ ոստիկանության պատմության թանգարանի կատարված աշխատանքները նպատակաուղղված են եղել ՀՀ ոստիկանության պատմության թանգարանի հիմնադրման 48-ամյակի արժանավայել դիմավորմանը:

Նշված ժամանակաշրջանում ոստիկանության պատմության թանգարան են այցելել ՀՀ ՆԳՆ տնտեսական վարչության գույքագրման հանձնաժողովի անդամները, ներքին զորքերի, Երևանի պետական հումանիտար քոլեջի, միջին մասնագիտական կրթական ծրագրով «Ոստիկանական գործ» մասնագիտությամբ առկա ուսուցման 1-ին կուրսի, փրկարար ծառայության և ճգնաժամային կառավարման ուսումնական ստորաբաժանման սովորողները, «Ակադեմիական քաղաք» ստեղծելու համար ստեղծված հանձնաժողովի անդամները, ՆԳՆ կրթահամալիրի և Եվրոպական համալսարանի ուսանողական խորհուրդների համագործակցության հուշագրի ստորագրման մասնակիցները, համայնքային ոստիկանները, Շվեդիայի արտակարգ իրավիճակների գործակալության (MSB) ներկայացուցիչ Հ. Նորելինը, ՀՀ ՆԳՆ ոստիկանության պետ Ա.Ղազարյանը, ՀՀ ՆԳՆ ներքին անվտանգության և հակակոռուպցիոն վարչության պետ Դ.Աղաբալյանը, Երևանի 181 հիմնական, Արգավանդի միջնակարգ դպրոցների աշակերտները, պահնորդները:

Ռուսաստանի դաշնության Գլխավոր դատախազության տեղեկատվական աջակցությանը կից «Հայրենասեր» Ազգային կինոյի ֆոնդը թանգարանի առաջատար մասնագետ Դ.Հովսեփյանի մասնակցությամբ նկարահանել է 1977 թ. օգոստոսի 5-ին ԽՍՀՄ պետբանկի երևանյան բաժանմունքից կատարված գողության մասին վավերագրական ֆիլմ, «Շանթ» հեռուստաընկերությունը թանգարանում նկարահանել է «Բացահայտված գործեր» սերիալի վերաբերյալ դրվագներ:

Թանգարանի աշխատանքները վերսկսելուց հետո՝ 2015 թվականից, թանգարան են այցելել 4878 անձ, իսկ Հաշվետու ժամանակաշրջանում՝ 342 անձ: